Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Պ-328[2]-01.07.2022-ԳԿ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ
«ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.

«Լեզվի մասին» 1993 թվականի մարտի 30-ի ՀՕ-52 օրենքի 1.1-ին հոդվածի առաջին մասը լրացնել նոր պարբերությամբ հետևյալ բովանդակությամբ. «ժեստերի լեզու՝ լեզվական ինքնատիպ համակարգ, որը դրսևորվում է ձեռքերի իմաստավորված շարժումներով՝ դիմախաղի, շրթունքների շարժումների և մարմնի դիրքի համակցմամբ:»:

Հոդված 2.

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ընթացիկ իրավիճակը եւ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է ժեստերի լեզվի սահմանման վերաբերյալ օրենսդրական բացը լրացնելու անհրաժեշտությամբ:

2020 թվականի օգոստոսի 7-ին ուժը կորցրած է ճանաչվել «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքը, որի 3-րդ հոդվածով սահմանվում էր «սուրդոթարգմանություն՝ հեռուստահաղորդման համաժամանակյա թարգմանությունը ձեռք-լեզվով»: Սակայն 2020 թվականի հուլիսի 16-ին ընդունված «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքը չի ներառում համարժեք սահմանում: Այսպիսով ժեստերի լեզվի հասկացությունը որևէ այլ օրենքով սահմանված չէ:

Ելնելով վերը նշվածից անհրաժեշտություն է առաջացել լրացնելու օրենսդրական բացը և նկատի ունենալով, որ ժեստերի լեզուն ամբողջական և համալիր լեզվական համակարգ է նպատակահարմար է հասկացությունը սահմանել «Լեզվի մասին» ՀՀ օրենքում:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Առաջարկվող իրավական ակտով նախատեսվում է լրացում կատարել «Լեզվի մասին» ՀՀ օրենքում և սահմանել «Ժեստերի լեզու» հասկացությունը:

3.Ակնկալվող արդյունքը

Օրենքի ընդունման արդյունքում կլրացվի օրենսդրական բացը, որն առաջացել է 2020 թվականի օգոստոսի 7-ին «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի ուժը կորցնելու հանգամանքով:

ՏԵՂԵԿԱՆՔ ՆԱԽԱԳԾԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.

«Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության 1993 թվականի մարտի 30-ի ՀՕ-52 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1.1.-րդ հոդվածը լրացնել նոր պարբերությամբ հետևյալ բովանդակությամբ ~~նոր կետով հետեւյալ նախադասությամբ~~. «ժեստերի լեզու՝ լեզվական ինքնատիպ համակարգ, որը դրսևորվում է ձեռքերի իմաստավորված շարժումներով՝ դիմախաղի, շրթունքների շարժումների և մարմնի դիրքի համակցմամբ:»:

~~Անցումային դրույթներ~~

Հոդված 2.

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ ~~10-րդ~~ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

««ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

(Պ-328[2]-01.07.2022-ԳԿ-011/0) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	Նախագիծ	Նախագծից անհրաժեշտ է հանել «Անցումային դրույթներ» բառերը՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի պահանջները:	Առաջարկն ընդունվել է:Անհրաժեշտ փոփոխությունը կատարվել է:	Ընդունվել է
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում «նոր կետով հետևյալ նախադասությամբ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «նոր պարբերությամբ հետևյալ բովանդակությամբ» բառերով: Հիշյալ դիտողությունը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի դրույթներից:	Առաջարկն ընդունվել է: Հոդվածը խմբագրվել է:	Ընդունվել է